



U. Schlichter
Linné - 2/1/18
Seite 12

Handwritten scribbles and lines at the top left of the page.

493.- Ս.ՔԷԼԻՈՒՆԻ ԶԵՆԱԳԻՐ ՅՈՒՆԵՐԻՆ ԱՆՍ ԱՆ





Այս հատորով կու գանք ներկայացնելու Հայոց Յեղասպանութեան գլխատր կազմակերպիչ, հայ ժողովուրդի դահիճ Թալէաթ փաշան պատժող վրիժառու բազուկ Սողոմոն Թեհլիրեանի բանտային օրագիրը՝ ձեռագիր եւ տպագիր տարբերակով:

Այս օրագիրը, որ ամբողջական չէ, կը պատկանի ՀՅԴ Պատմութեան-Թանգարան հիմնադրամին եւ վերնագրուած է «Ս. Թեհլիրեանի ձեռագիր յուշերէն մաս մը»:

Հատորի հրապարակումը կը նուիրենք Սողոմոն Թեհլիրեանի արդարատենչ արարքի 100-ամեակին:

ՀՀԴ Հանրային Կապերու Գրասենեակ
Մայիս 2021

1921 Մարտ 15-ը Պերլինի մէջ

Երջանիկ Առաւօտն էր...

Զարհուրելի երազէ մը սթափուելով աչքերս կը բանամ: Կը տեսնեմ արևի առաջին ճառագայթները որոնք պատուհանիս վարագոյրին փոքրիկ ծակտիկներէն ներս սողսկելով՝ կարծես երջանիկ առաւօտ մը կուզէին աւետել ինձ: Ժամացոյցս կը նայիմ, որը դրուած էր մահճակալիս անմիջապէս մօտիկ փոքր սեղանի մը վրայ: Ժամը 8-ը 25 ըրպէ անցած է: Գլանիկ մը կը վառեմ ու կսկսիմ անկողնոյս մէջ ծխել. սակայն անհանգիստ կզգամ ինքզինքս, առանց ֆիզիքական որևէ ցաւ ունենալու. միտքս կը տանջուի՝ ծանր խոկումներու տակ ընկճուած, որոնք առաջացած էին այդ իմ տեսած երազի ահռելի տպաւորութիւնէն: Մի ըրպէ կը մտաբերեմ իմ նախնիքներու խօսածները՝ երազներու վերաբերմամբ, թէ՛ վատ երազները յաճախ լաւ հետևանքներ ունենալու նշանակութիւնը կունենան: Ուզելով ինքզինքս

համոզել թե՛ իրականութիւն է այդ, ինչ որ ըսած են իմ նախահայրերը, որով իմ երազի նշանակութիւնը դէպի լաւը թարգմանելով անկողնէս վեր կելնեմ ու կսկսիմ հազնուիլ ուրախ տրամադրութեամբ: Ժամը 9-ը 10 բոպէ անցած է. լուր կուտամ ծառայողին որպէսզի նախաձաշ պատրաստէ: Քանի մը վարկեանէն արդէն պատրաստ էր նախաձաշը. բայց ախորժակ չունէի ուտելու կամ խմելու. չեմ գիտեր ինչո՞ւ, մինչդեռ նախորդ և անցեալ ամէն առաւօտներ շատ մեծ ախորժակով կը նախաձաշէի:

Երանգ... այդ զարհուրելի երազն էր որ միտքս կը տանջէր և անոր իմ վրայ թողած ազդեցութիւնն էր որ հեռացուցած էր ինձմէ ախորժակս և ամէն բան...: Բաժակ մը թէյ կը լեցնեմ, մտածելով որ գոնէ այդ կարողանամ խմել, բայց ո՛չ, այդ ալ զզուելի կը թուէր ինձ երբ բաժակը շրթներուս կը մօտեցնէի: Հոգիս կը տանջուէր ու սիրտս կը գալարուէր, կարծես աներեւոյթ

նախազգացումը լինէր պատճառը իմ այդ բոլոր ներքին իրարանցումին: Աչքերս կը բաղձային դէպի փողոցը ուղղել իրենց բիբերը, դէպի այնտեղ ուր այդ առաւօտեան գործի պահուն մարդիկ հապճեպ կ'անցնէին ու կը դառնային լայն փողոցի երկայնքին: Մինչ ես խորասուզուած իմ մտածմունքների մէջ ապուշօրէն փողոցի ամբոխը կը դիտեմ, իսկ անոնք՝ մարդիկ, իրենք այդ քալելու ժամանակը նոյնիսկ չէին ուզեր պարապ անցնել: Ոմանց ձեռքին առաւօտեան լրագիրներէն կար, որոնք մինչեւ իրենց գործատեղին հասնիլնին՝ արդէն օրուայ նոր լուրերուն տեղեակ եղած կը լինէին: Իսկ ոմանք ալ իրենց գործի ժամին ուղիղ հասնելու, և միևնոյն ատեն և ժամանակը շահագործելու համար՝ ճանապարհի ընթացքին, իրենց ձեռքի մէջ բռնած քանի մը կտոր սեւ հացով առաւօտեան նախաճաշին կը վայելէին...: Եւ այսպէս փողոցի

уездныя поименныя списки, а также
сведения о состоянии здоровья и
образовании населения. Уездные
комитеты должны представлять
в губернские комитеты сведения
о состоянии здоровья населения
и о состоянии дел в уезде
по всем предметам, относящимся
к ведению земства, а также
о состоянии дел в уезде по
всем предметам, относящимся
к ведению земства. . . . :

Губернские комитеты, представляющие
сведения, указанные выше, передают
их в министерство внутренних дел
для представления, а также
сведения по предметам, относящимся
к ведению земства. . . . :

անվերջ եռուզեռը զիս դէպի իրեն կը քաշէր, զիս իրմով կը հետաքրքրէր՝ նախաճաշ ընելու ախորժակս նոյնիսկ ինձմէ խլելով: Սեղանիս վրայ նախաճաշի համար դրուած զանազան ուտելիքներէն մի պատառ իսկ չեմ ուզեր վերցնել, միայն թէյի բաժակէն քանի մը ումպ կառնեմ և թէյի բաժակն ալ ձգելով կը մօտենամ սենեակիս պատուհանին, որուն փեղկերը արդէն բացուած էր, աւելի մօտէն տեսնելու համար բոլոր անցորդները և ամբոխը, ու փնտռել այնտեղ, անոնց մէջէն, մէկը գտնելու համար որը գուցէ կարողանար իմ տեսած երազի իրական նշանակութիւնը ինձ պատմել և գուշակէր այդ զարհուրելի երազիս հետևանքը...:

Պատուհանի առջև, թիկնաթոռի մը մէջ ընկողմնացած, աչքերս դէպի փողոցը յառած դրութեամբ կը տարուիմ անհուն ու խոր երազանքներու կոհակներուն, ընդլուզուելով անոնց անյատակ խորութեան մէջ: Իսկ իմ այդ անզգա-

у нас тоже была республика в то время, а тогда
было это в то же время...

Тогда же, как представляется, вопрос-вопрос
выражен в том, что мы не можем себе...

Тогда же, как же мы можем это сделать? Это же
же вопрос:

Тогда же, что же мы можем, как же мы можем
мы можем себе, мы можем себе, мы можем
себе, мы можем себе, мы можем себе, мы
можем себе, мы можем себе, мы можем себе...

Мы же не... Мы же не... Мы же не...
мы же не... мы же не... мы же не...
мы же не... мы же не... мы же не...
мы же не... мы же не... мы же не...
мы же не... мы же не... мы же не...

У нас же в то же время было 11-е марта...
мы же не... мы же не... мы же не...
мы же не... мы же не... мы же не...
мы же не... мы же не... мы же не...
мы же не... мы же не... мы же не...

յացած դրովժեան ընթացքին՝ ես երկրորդ, և իրական
երազ մըն էր որ կը տեսնէի...:

Երանգ մը, որու իրականացումը շատ-շատերու
այրուած սրտերուն անզուսպ բաղձանքն էր:
Երանգ մը, որը ինձ համար նոր շրջան մը, նոր կեանք
մը կ'ստեղծէր:

Երանգ մը վերջապէս, որը բիւրաւոր ու անմեղ
նահատակներու, անապատներուն մէջ անթաղ
մնացած ոսկորներէն մխացող բողոքի ու
վրէժի ձայնին արդար հատուցումն էր...

Ոսկորներ... Անտէր ու անթանղ անվերջ
ոսկորներ, որոնց հեկեկանքի ձայնն էր որ
կը հասնէր ականջիս այս գիշերուայ իմ
տեսած զարհուրելի երազիս ընթացքին...:

Կէսօրէ առաջ ժամը 11-ի մօտերը Հար-
դէնպէրկ ու Ֆազանէն փողոցներու անկիւնը կը գըտ-
նեմ ինքզինքս՝ շրջապատուած ամբոխով. որոնցմէ
մի քանին երկու թեւերէս պինդ կերպով բռնած են:

կը նայիմ զիս շրջապատողներուն դէմքերուն, բայց կը զարմանամ թէ ինչո՞ւ համար այդքան սպառնական են այդ մարդոց նայուածքները ինձ հանդէպ, քանի որ բոլորն ալ ինձ համար անծանօթներ են. և ի՞նչ է պատահած այդ մարդոց որոնք իրենց բռունցքները բարձրացուցած կուզէին հարուածել զիս և նոյնիսկ մահացնել՝ եթէ կարելի լինէր: Կը մտածեմ ըսպէ մը թէ՛ արդեօք ի՞նչ գործ ունեցած պիտի ըլլամ այս բազմութեան հետ որոնց լեզուն իսկ ինձ անծանօթ է: Մինչ այդ կզգամ թէ զլուխս սոսկալի ցաւ մը ունիմ, և մի ինչ որ հեղուկ կը կաթկթէ այտերէս վար: Կը տեսնեմ այլևս որ այդ կաթկթուկը ուրիշ բան չէ եթէ ոչ իմ սեպհական արիւնը որ կը հոսեր գլխէս դէպի վար, այտերս ու մարմինս ներկելու համար: Անգամ մը ևս կը ներկուէր այն մարմինը որը արիւնի ովկեանէն հազիւ ազատուած ըլլալով՝ կուգար այդ արիւնի

ովկեանին ակը ցամքեցնելու:

Արդէն գիտակցութիւնս վերագտած եմ: Կսկսիմ բաւական բարձր ձայնով աղաղակել թէ՛ “ոստիկանութիւնը կուզեմ” – ի հարկէ իրենց լեզուով – մինչ այդ, ժողովուրդին մէջէն մէկը կ’առաջանայ դէպի ինձ և կ’յայտնէ թէ ինքը գաղտնի ոստիկան մըն է. իսկ ես տեսնելով որ ոստիկանը կողքիս կեցած է և այլևս նա է որ իմ թևէն բռնած է՝ կարծես բաւ(կա)նին ուժեղացայ, և մի վարկեան յուսացի թէ արդէն ազատուած եմ այդ անզգամ ամբոխի ձեռքէն: Իսկ հետզհետէ, ոստիկանին ներկայութիւնէն աւելի քաջալերուելով, կարողացայ քանի մը բառեր իրարու մօտ բերելով, իրենց լեզուով ըսել այդ հաւաքուած ամբոխին թէ՛ “ես օտարական մըն եմ, և օտարականի մը հետ է իմ գործը. գերմանացիներու դէմ ոչինչ ունիմ:” Այս իմ յայտնութիւնը իր որոշ ազդեցութիւնը ունեցաւ ժողովրդի վրայ, որը սկսաւ հանդարտիլ և հետաքրքրուիլ գործին էութիւնը

Handwritten text in German, likely a letter or document. The text is written in a cursive script and is mostly illegible due to fading and blurring. The visible words and phrases include:

Handwritten text in German, likely a letter or document. The text is written in a cursive script and is mostly illegible due to fading and blurring. The visible words and phrases include:

Handwritten text in German, likely a letter or document. The text is written in a cursive script and is mostly illegible due to fading and blurring. The visible words and phrases include:

հասկնալու համար: Մինչ այդ ոստիկաններու խումբեր կը հասնին ամէն փողոցներէ: Երկտ քաղաքային ոստիկաններ թևերէս բռնած կ'առաջանանք 'Հարտէնպէրկ' փողոցով դէպի կենդանաբանական պարտէզի ուղղութեամբ: Հազիւ 20-25 քայլ առած կը տեսնեմ որ նոյն փողոցի մայթին վրայ անցորդներու բազմութիւն մը հաւաքուած է. և երբ այդ բազմութեան կողքէն կ'անցնէին զիս՝ կը նայիմ անոնց կողմը գիտնալու համար թէ արդեօք ինչո՞ւ հաւաքուած են այդ մարդիկը. ահա կը տեսնեմ մարդոց ոտքերու ներքև փռուած դիակ մը, որու արիւնը մայթի ամբողջ անցքը ներկած էր սև գոյնով մը: Երբ զիս այդ արիւնին վրայէ կանցընէին, ճանապարհը շարունակելու համար, կարծես ոտքերս ինքնին սկսան գետնին քսքսուիլ՝ ներկուելու համար այդ գարշելի արիւնէն որուն գազանային հոտը կառնէի այդ րոպէին: Իսկ երբ

այդ բազմութեան մօտէն ալ կը հեռանանք քիչ մը, այդ պահուն գլուխս ինքնաբերաբար կը դառնայ դէպի այնտեղ ուր իմ աչքերը պիտի կարողանային վերջին անգամը ըլլալով՝ իմ հոգիի ատելութեան ու սրտի վրէժինդրութեան ամբողջ մաղձը պարունակող, իրենց նողկանքի ակնարկները ձգելու, որպէս թշնամուն կուրծքը մխուղ վրէժի նիզակ մը, այդ անշնչացած, գազանակերպ դիակին վրայ:

Ահ, որքան պիտի ուզէի մնալ այդտեղ, երկար սպասել՝ տեսնելու համար այն բոլոր հոգիները որոնք երևակայական թևեր առած պիտի գային իրենց խրախճանքի պարը պարելու այդ ինկած դիակին շուրջ: Բայց ասոնս, կը հեռացնէին կը տանէին զիս, արգիլելով ինձ տեսնել հարիւր հազարաւոր նահատակներու հոգիներուն զարթնումը և անոնց ուրախութեան ովսանանները՝ իտես այդ սատակին:

Քանի մը վարկեանէն կը հասնինք մօտա-

կայ ոստիկանական պահականոցը. ցաւերս աւելի կ'սկսին սաստկանալ. ոտքերս այլևս անկարող են մարմնոյն ծանրութիւնը կրելու, յատակի վրայ կ'ընկնիմ ու կը խնդրեմ ոստիկաններէն որպէսզի գոնէ մի հատ գլանիկ տային ծխելու համար, բայց կը մերժեն զիս՝ այդ իսկ զլանալով ինձ տալ: Նոր գաղտնի ոստիկան մը կը մօտենայ ինձ և իմ գետնի վրայ պառկած վիճակին մէջ հարցումներ կուղղէ, բայց ես անոր ըրած զանազան հարցումներուն չեմ մէկուն կը պատասխանեմ. իսկ արդէն այդ հարցումներուն մէկ մասն ալ իրականին մէջ չէի հասկնար: Յիշեալ գաղտնի ոստիկանէն կը խնդրեմ գլանիկ մը, այն ձեռով որ իբր թէ իր ըրած հարցերը երբէք լսած չի լինեմ. և փոխան գլանիկի կստանամ ոտքի ուժեղ աքացի մը կողքիս: Բոպէ մը կը յուսահատիմ, կարծելով թէ թուրքերէ շրջապատուած եմ:

Ոստիկաններէն մին ձեռքին վիրակապեր բռնած կը մօտենայ ինձ և կսկսի գլխուս վէրքերը

փաթաթել. իսկ այդ փաթաթումը վերջանալէն յետոյ կը խնդրեմ այդ իսկ ոստիկանէն որպէսզի ծխելիք տայ ինձ. ոստիկանը իր շուրջը ակնարկ մը ձգելէ յետոյ, տեսնելով որ իրեն համար կասկածելի մէկը չիկայ - այդ պահուն միայն քանի մը քաղաքային ոստիկաններ մնացած էին ինձ մօտ - գրպանէն գլանիկ մը հանեց և ինձ երկարեց, շնորհակալութեամբ վերցուցի, միաժամանակ կրակն ալ իրմէ ստանալով սկսայ ծխել: Կարծես ըրպէական փոխուեցաւ դրովթինս, և գլանիկի ծուխին հետ վերացան բոլոր ցաւերս ու ես բնականոն վիճակս ստացայ: Հազիւ քառորդ ժամ անցած, զիս դուրս՝ փողոց կը հանեն ուր մէկ ձիով բաց կառք մը կ'սպասէր. երկու ոստիկաններու օգնութեամբ կառքը կը բարձրանամ, իսկ իրենք՝ ոստիկաններն ալ երկու կողքերս նստելով կառքը կը շարժի առաջանալ: Զանազան փողոցներէ անցնելէ վերջ՝ հազիւ տասը ըրպէ տևած, կը կանգնի կառքը.

զիս կառքէն վար կ'իջեցնեն ու կ'առաջնորդեն տունէ մը ներս որուն վրայ հետևեալ վերտառութիւնը կը կարդամ՝ “Գաղտնի ոստիկանական գրասենեակ”։ Պաշտօնեաներու և ոստիկաններու բազմութիւն մըն է որ կը տեսնեմ շէնքէն ներս. մի սենեակ կը տանին զիս ուր խոտէ անկողնի մը վրայ ուժալծափ կ'ընկնիմ. այդ վիճակս շատ չի տևած աչքերս կը բանամ ու կը տեսնեմ որ միայն քանի մը քաղաքային ոստիկաններ կեցած են գլխուս վերև, անոնցմէ մէկէն կը խնդրեմ ինձ ծխելիք տալ, բարեբաղտաբար այդ մի ոստիկանը որուն ուղղած էի խնդրանքս, զգալով իմ տանջանքը կը խղճայ ինձ վրայ ու կուտայ սիրայօժար աղերսածս մէկ գլանիկը։ Հազիւ հինգ րոպէ անցած ներս կը մտնէ մի քաղաքացիական տարազով պարոն՝ որը գաղտնի ոստիկան ըլլալու էր, ու կուզէ զիս հարցաքննել։

Անունս և մականունս յայտնելէ վերջ կըսեմ որ “հայ մըն եմ և այդ մարդը որուն հետ՝

կըսէք թէ գործ ունեցած եմ, անիկա ալ թուրք մըն է”։ Աւելի բան մը չեմ խօսիր առարկելով որ հիւանդ եմ ու խօսելու կարողութիւն չունիմ։

Հազիւ կէս ժամ անցած այդտեղէն ալ կը վերցնեն զիս ու դուրս կը հանեն. դռան անմիջապէս առջևը կը տեսնեմ երկու ձիերով հսկայ գոց կառք մը կեցած, և երբ ինքզինքս այդ գոց կառքին փոքրիկ դռնակին առջև կը տեսնեմ ահա մահուան ցուրտ սարսուռ մը կանցնի ոսկորներուս մէջէն. ու ըստական կը մտաբերեմ այն սև գոց կառքերը որոնք կարմիր Սուլթանին օրերուն կենդանի էակներու և հալածուած հայերու որպէս դիակառք կը ծառայէին։

Ոստիկանին օգնութիւնով կը բարձրանամ դէպի այդ կառքի փոքրիկ դռնակը և ներս կը մտնեմ. ոտքիս վրայ կեցած եմ կառքին մէկ բաժանուածքին մէջ ուր երկու հոգիէ աւելի մարդ չէր կրնար կենալ իր նեղութեան պատճառով։ Մէկ մարդու համար մի փոքր նստարան կար՝ ամրացուած կառքի կողքերուն,

ոտքերուս վրայ չկրնալ կենալու համար կուզէի մի բոպէով նստիլ յիշեալ փոքրիկ նստարանին վրայ, սակայն ոստիկանը որ դռանը առջև կեցած էր, բարձրանալով ինձ մօտ կ'արգիլէ այդտեղ նստիլը , - անմիջապէս գրպանէն բանալիներու տրձակ մը հանելով ուրիշ մի երկրորդ փոքրիկ դռնակ կը բանայ կառքին մէջէն, և զիս այդ դռնակէն ներս հրելով կը փակէ զայն իմ վրայէն: Ինքնին ստիպուած կըլլամ նստիլ տախտակի մը վրայ, երբ արդէն տեղը այնքան նեղ ու ցածր է որ միմիայն մէկ մարդ կրնայ նստիլ, ո՛չ կանգնիլ, որու ոյժը չիկար արդէն իմ ոտքերուն վրայ, և ոչ ալ շարժիլ: Դռնակին վրայ փոքրիկ բացուածք մը կայ որտեղից միայն ոստիկանին դէմքը կը տեսնուի, և որը անվրէպ ինձ կը նայի այդ բացուածքէն՝ անշուշտ մտածելով թէ չ'լինի՞, որ այդ իմ կաշկանդուած դրովթեան մէջ գուցէ յանկարծ համբառնամ և իր աչքի տեսողութիւնէն կորսուիմ: Կառքը կը շարունակէր իր ընթացքը

penyala itu adalah perantara yang menghubungkan antara
sumber tenaga listrik dengan beban. Fungsi utamanya
adalah untuk melindungi tenaga listrik dari gangguan
yang mungkin terjadi. Selain itu, pemutus tenaga listrik
juga berfungsi untuk mematikan tenaga listrik secara
cepat dan aman. Pemutus tenaga listrik yang baik harus
memiliki karakteristik sebagai berikut: 1. Harus memiliki
kemampuan pemutusan tenaga listrik yang tinggi. 2. Harus
memiliki waktu pemutusan tenaga listrik yang cepat. 3. Harus
memiliki umur pakai yang panjang. 4. Harus memiliki harga
yang terjangkau. 5. Harus memiliki ukuran yang kompak.
Pemutus tenaga listrik yang baik akan meningkatkan
keandalan sistem tenaga listrik. Oleh karena itu, pemilihan
pemutus tenaga listrik yang tepat sangat penting untuk
keamanan sistem tenaga listrik.

բայց չեմ գիտեր թէ ո՞ր կը տանէր զիս, քանի որ բացի ոստիկանին դէմքէն ուրիշ ոչինչ կրնամ տեսնել: Վերջապէս կառքը կանգ կ'առնէ և ոստիկանը իմ վրայէ փակուած դռնակը բանալով՝ կը բանայ միաժամանակ կառքին դուրսի երկրորդ փակուած դուռն ալ ու զիս դուրս կառաջնորդէ կառքէն վար իջեցնելով: Կը տեսնեմ ուրիշ շատ մը ոստիկաններ որոնք երևի գործին տեղեակ լինելով այդտեղ կսպասսէին: Հսկայ շէնքէ մը ներս կ'առաջնորդեն զիս, կը վերյիշեմ թէ մէկ քանի ամիսներ առաջ, գործի մը առթիւ յաջախած էի այդ շէնքը որը շալոթէնպուրկ քաղաքամասի կեդրոնական ոստիկանատունն էր: Սակայն այդ վերյիշումս քիչ մը կը տխրեցնէ իմ հոգին որովհետև անցեալին երբ այդ միևնոյն տունէն կը մտնէի, ոստիկաններով ու խիստ հսկողութիւնով մը չէր որ կ'առաջնորդուէի այլ որպէս ազատ մարդու սեպհական գործով ազատ կը մտնէ ու ազատ ալ դուրս կելնէի այդ միևնոյն տունէն.

իսկ հիմա իմ կամքէն անկախ էր այդ շէնքը մտնելը, կը տանէին զիս որպէս ձերբակալեալ մը և աւելի զարհուրելին՝ որպէս ոճրագործ մը...

Մի քանի ոստիկաններու օգնութեամբ սանդուխներէն կը բարձրանամ մինչև երրորդ յարկաբաժինը, ուրտեղ զանազան ոլոր-մոլոր անցքերէ անցնելէ յետոյ երկաթէ դռան մը առջև կը կեցնեն զիս: Դուռը կը բացուի ու ոստիկաններով միասին ներս կը մտնենք. գրասենեակ մըն է, ուր կը տեսնեմ պաշտօնեայ մը իր գրասեղանին առջև նստած, որը կարծես իմ այդտեղ հասնելուն կ'սպասէր. առաջին առթիւ բարկացոտ թոնով մը անունս և մականունս կը հարցնէ ու այդ լսելէ յետոյ կ'արձանագրէ իր առջև՝ գրասեղանին վրայ, գործուած հսկայ տոմարին մէջ. յետոյ կ'սկսի ուրիշ հարցումներ ուղղել ինձ բայց ես կը յայտնեմ որ նախ գերմաններէն չեմ կրնար խօսիլ ու միայն հայերէն գիտցող թարգմանի մը միջոցով կրնաք

հարցաքննութիւն կատարել. իսկ երկրորդ սարսափելի գլ(խ)ու ցաւ ունիմ և բժշկի մը պէտքը կ'զգամ: Մինչ այդ կարգ մը պաշտօնեաներ, ծառայող ու ծառայողուհիներ հաւաքուած էին գրասենեակին մէջ. և այս զիս շրջապատող մարդոց ու կիներու դէմքերուն վրայ՝ դէպի ինձ ուղղուած, սպառնական արտայայտութիւնները կը տեսնէի որոնք սարսափ կ'ազդէին հոգիիս....:

Ծառայողի մը կողմանէ կ'առաջնորդուիմ սենեակի մը դռան առջև, դռան երկաթէ լինելը արդէն կը յայտնէր ամէն բան... Բանտի ամայի խուցի մը երկաթէ դուռն էր որ պիտի բացուէր իմ առջև: Ինձ առաջնորդող ծառայողը իր ձեռքը գտնուած բանալիներու տրձակէն մի հատ զատելով կը բանայ սենեակին դուռը և կը հրամայէ ինձ մեծ յոխորտանքով մը որպէսզի ներս մտնեմ. կը համակերպիմ եղած հրամանին ու ներս կը մտնեմ: Բարձր շառաչիւնով մը կը փակուի դուռը վրայէս:

Շառաչին մը որուն առաջին տպաւորութիւնը մինչև հոգիիս աչքերը սարսռացնէին: Սենեակին մէկ կողմը դրոած փայտէ մահճակալին վրայ կ'ընկնեմ գլխուս տակ գտնելով խոտէ շինուած բարց մը: Մինչ խորհուրդներու մէջ թաղուած կը մտածէի թէ ինչ են այս բոլորը որոնք պատահեցան ինձ այսօր, և ուրտեղ եմ ես, արդեօք երա՞զ է այս ամենը թէ իրականութիւն, ու ես իրապէս բանտն եմ: Սենեակիս դուռը կը բացուի, ծառայող կը յատնէ ինձ որ դուրս գամ սենեակէն ու իրեն հետևիմ. ուրիշ մի սենեակէ ներս կը մտնենք ուր ակնոցաւոր մարդ մը ոտքի վրայ կ'սպասէր: Բժիշկն էր: Ծառայողներէն մին գլխուս փաթաթոցը կը քակէ. բժիշկը գլխուս վրայ գտնուած վէրքը լուանալէ յետոյ նորէն կը փաթաթէ: Այս գործողութեան ընթացքին շատ մը պաշտօնեաներ կը մտնէին ու կելնէին յիշեալ սենեակը բայց զարմանալին այն էր որ անոնց քիչ առաջուայ խոժոր դէմքերը այլևս չէի տեսներ, ընդհակառակը ոմանք աւելի շատ համակրական նայուածք-

27
28
29
30
31
32
33
34
35
36
37
38
39
40
41
42
43
44
45
46
47
48
49
50
51
52
53
54
55
56
57
58
59
60
61
62
63
64
65
66
67
68
69
70
71
72
73
74
75
76
77
78
79
80
81
82
83
84
85
86
87
88
89
90
91
92
93
94
95
96
97
98
99
100

ներով իմ կողմը կը նայէին: Բժշկին կը յայտնեմ որ սոված եմ և կ'ուզեմ որ՝ եթէ կարելի է, իմ դրամով ինձ ուտելիք բերել տան. հաւանութիւն կուտայ կատարելու իմ այդ խնդիրքը ու զիս կը վերադարձնեն նորէն միւնոյն սենեակը, սակայն այս անգամ սենեակիս դուռը բոլորովին բաց կը թողուն: Հազիւ թէ նստած եմ ահա բանտարկեալի հագուստով մի պարոն կը մտնէ ինձ մօտ, ու կ'սկսի խօսիլ, կը յայտնեմ անմիջապէս որ իրեն խօսած լեզուն (գերմաներէն) չեմ կրնար հասկնալ և խօսիլ. իսկ նա փոխանակ հեռանալու իմ մօտէն՝ որ արդէն իմ խօսելու թօնէն այդ կը հասկցուէր, սկսաւ այս անգամ ալ ռուսերէն խօսիլ ու հարցնել թէ՛ արդեօք այս վերջի լեզուն կրնամ խօսիլ, որուն ի պատասխան կը յայտնեմ թէ շատ քիչ կրնամ հասկնալ բայց խօսիլ՝ ո՛չ: Իսկ նա քաջալերուելով թէ գոնէ քիչ մը կը հասկընամ այդ լեզուն, կսկսի զանազան հարցումներ տալ ինձ, որոնց շատերը շատ վտանգաւոր հարցումներ կը թուէին ինձ ու կսկսիմ կասկածիլ

was geschickterweise zu erklären vermögen und
 nicht nur die Sache selbst, sondern auch die
 Art der Ausführung der Arbeit zu erklären. Diese
 Arbeit ist ein gutes Beispiel für die
 Anwendung der Regeln, die wir in der
 Vorlesung besprochen haben. Sie zeigt
 deutlich, dass die Regeln nicht nur
 dazu dienen, die Arbeit zu erleichtern,
 sondern auch, die Qualität der Arbeit
 zu verbessern. Die Regeln sind so
 formuliert, dass sie die Arbeit
 nicht nur erleichtern, sondern auch
 die Qualität der Arbeit verbessern.
 Die Regeln sind so formuliert, dass
 sie die Arbeit nicht nur erleichtern,
 sondern auch die Qualität der Arbeit
 verbessern. Die Regeln sind so
 formuliert, dass sie die Arbeit nicht
 nur erleichtern, sondern auch die
 Qualität der Arbeit verbessern.

այս բանտարկեալի երևոյթով մարդուն վրայ, իսկ արդէն առանց դեռ կասկած մը ունենալուս ալ ոչ մէկ հարցումին չէի պատասխաներ միայն երբեմն նէթ ու դա բառերը կը շշնջայի շրթներուս ծայրէն, որ ըսել է ոչ կամ Այո: Նա կը շարունակէր իր հարցումներու երկար շարքը, և յաճախ կուզէր իմանալ թէ ո՞վ է այդ մարդը որ սպաննուած է եղեր իբր թէ, ու այդ առթիւ կը հարցնէր ռուսերէն լեզուով, “ինչո՞ւ այդ մարդը սպաննեցիր: Ո՞վ էր այդ մարդը: Իշխան է՞ր, վարչապետ է՞ր, նախարար է՞ր, սուլթան, Լյլն”։ Այս բոլոր հարցումներուն և ոչ մէկին կը պատասխանեմ կարծես չհասկցած ձևացնելով ինքզինքս, ու իմ կողմէ այդ բոլորին որպէս պատասխան կը խնդրեմ իրմէ որ եթէ ծխելիք ունի ինձ մի հատ գլանիկ տայ, յետոյ իրեն վերադարձնելու պայմանով. իսկ նա կը յայտնէ որ ինքը թէև չունի իմ փնտրածը սակայն կայ մի ուրիշ

The first thing I saw
 as I stepped out of the
 car was a beautiful
 morning. The sun was
 shining brightly and
 the birds were singing
 happily. I felt a sense
 of peace and joy. I
 had never felt like this
 before. It was a truly
 wonderful experience.
 I had heard that the
 weather was perfect and
 now I knew it was true.
 The view was amazing
 and I had never seen
 anything like it before.
 I had heard that the
 people were friendly and
 now I knew it was true.
 They were so nice and
 helpful. I had never
 felt like this before.
 It was a truly wonderful
 experience. I had heard
 that the weather was
 perfect and now I knew
 it was true. The view
 was amazing and I had
 never seen anything like
 it before. I had heard
 that the people were
 friendly and now I knew
 it was true. They were
 so nice and helpful. I
 had never felt like this
 before. It was a truly
 wonderful experience.

բանտարկեալ որը միշտ կունենայ իր մօտ և կը ծախէ բանտարկեալներու՝ դրամով և կամ մի որևէ առարկայով: Այս պարագան յայտնելէ յետոյ մօտիկցաւ ինձ ու կուզէ մատէս մատանիս հանել ու տանել յիշեալ բանտարկեալին փոխարէն ինձ մէկ հատ գլանիկ բերելով: Զեռքս ետ կը քաշեմ ու չեմ թողոր որ մատանիս հանէ. միևնոյն ժամանակ յայտնելով իրեն թէ ոչինչ կուզեմ իրմէ. բայց կը փափաքիմ գիտնալ թէ արդեօք ի՞նչ շարժառիթներով բանտարկուած է. իսկ նա համարձակօրէն ու հոգեկան գոհունակութեամբ կը յայտնէ ինձ թէ գողութիւն ըրած և ատոր համար վեց ամսուայ բանտարկութեան վճիռ մը ստացած է ու կըսէ - ‘արդէն երկու ամիսը անցաւ և չորս ամիս ետքը նորէն ազատ պիտի լինիմ’: Այսինքն ազատ լինելուն պէս նորէն գողութեամբ պիտի պարապի: Այս իր վերջին յայտնութիւնները լսելուս կը խնդրեմ իրմէ որ առանձին

ձգէ զիս իմ սենեակիս մէջ: Բայց հինգ ըրպէ ան-
ցած նորէն սենեակիս դռնէն ներս կը սպրդի: Կսկսի
միկնոյն հարցումներուն միկնոյն նիւթերուն վրայ
խօսիլ ու խօսիլ առանց մէկ պատասխան ստա-
նալու, հակառակ անոր որ իր խօսածներուն
մեծ մասը ինձ ուղղուած հարցումներ էին:
Մինչ այս կը խօսէր անդադար երբ բանտի ծա-
ռայողներէն մին վրայ կը հասնի ու կը հարցնէ
ինձ թէ՛ ուտելու համար ինչի՛ պէտք ունիմ:
զանազան ուտելիքներ ապսպրելէ յետոյ չեմ մոռա-
նար յիշեցնելու որ ծխելիք ալ բերէ, գոնէ իմ
ծխատուփին մէջ եղածները բերեր ինձ, որը խուզար-
կութեան պարագային ոստիկանները վերցուցած
էին գրպանէս:

Հազիւ թէ 10-20 վարկեան անցնելէ յետոյ ուրիշ
մի ծառայող իմ ապսպրանքները ձեռքին բռնած
ներս կը մտնէ, և անոր անմիջապէս կը հետևի
միկնոյն բանտարկեալ արարածը, որը կարծես
ինքնին զգուելի էր դառցած ինձ համար:

Einmalig und anders als jedes Mal ist die Aufgabe eines
Lehrers, und zwar nicht bloß die Vermittlung von
Wissen, sondern die Erziehung, die Erhellung der
Seele, die Erziehung zum Denken, zum Handeln, zum
Leben. Und das ist die Aufgabe eines Lehrers, die
nicht nur in der Schule, sondern auch im Leben
zu erfüllen ist. Und das ist die Aufgabe eines
Lehrers, die nicht nur in der Schule, sondern
auch im Leben zu erfüllen ist. Und das ist die
Aufgabe eines Lehrers, die nicht nur in der
Schule, sondern auch im Leben zu erfüllen ist.

Հակառակ անոր որ ոչինչ կերած էի ամբողջ օրուայ ընթացքին, սակայն ուտելիքները հասնելուն բոլորովին հեռացաւ ինձմէ ախորժակս, որը կարծես կզգայի քիչ առաջ երբ բան մը չիկար ուտելու: Իսկ այդ զգուելի արարածը՝ բանտարկեալ կեցած է մօտս ու միշտ միևնոյն հարցումները կընէր ինչ որ օրուայ ընթացքին քանիցս անգամներ կըրկնած էր - ծառայողը իսկոյն հեռացած էր -:

Բանտարկեալին հարցումները այնքան ալ հաճելի չէին թուէր ինձ և արդէն առանձ այդ անհաճելիութեան ալ չպիտի ուզէի խօսիլ և կը փափաքէի առանձին լինել, որով նա կը խօսէր բայց բոլոր խօսածները անպատասխան կը մնային:

Միշոց մը մտածելով՝ կուզեմ զայն հեռացնել մօտէս, կը վերցնեմ հաւկիթ մը և փոքրիկ հաց մը՝ իմ ուտելիքներէն, տալով իրեն զանոնք կըսեմ՝ “զիս հանգիստ թող և գնայ իմ սենեակէն”: Բայց նա իմ տուածները վերցնելէ յետոյ կըսէ՝ “Հապա իմ ընկերոջս”, “լաւ” կըսեմ ու միևնոյն

չափով ընկերոջը համար ալ կուտամ, որու գոյութիւնը ինձ համար մութ էր: Վերջապէս այդքանով մը գոհանալով կը հեռանայ: Քիչ ժամանակ անցած՝ սենեակիս դուռը կը փակուի վրայէս: Կընկնեմ խոտէ անկողնոյն վրայ: Խաւար է սենեակս, կը մտածեմ թէ դուրսն ալ միևնոյնը պետք է եղած լինի, քանի որ ենթադրութեամբ կը կարծէի թէ գիշերը արդէն հասած պետք է լինի: Թէև աչքերուս վրայ քնելու բաղձանքը կը ծանրանար սակայն միտքս ու հոգիս մի կողմից ու գլխուս վերքի ցաւերը միւս կողմից անհնար կը դառցնէին ինձ քնանալը: Երբ կը փորձեմ ըստէ մը գլուխս՝ չոր, խոտէ բարցին վրայ հանգստացնել, ահա բարցին մէջ գտնուած կարծր շիւղերէն մին ուղղակի գլխի վերքիս հանդիպելով սաստիկ ցաւ մը առաջ կը բերէ որմէ կստիպուիմ վեր կենալ ու սկսել ման գալ սենեակիս երկայնքին որ հազիւ տասը քայլ կըլիներ. սենեակիս պատերէն մեկուն վրայ երկու տախտակներ

կային, որոնք առկախ մնացած էին և ես ցերեկը նկատած էի որ ատոնք շարժական են: Այդ տախտակներէն մին՝ որ աւելի փոքր էր ու ցած քան միւսը, կը շարժեմ և ահա վար կիջնէ մէկ ծայրը իսկ միւս ծայրը կը մնայ պատին վրայ շարժականօրէն ամրացուած. այս տախտակին վրայ երկրորդ փայտ մըն ալ կար, որը նոյնպէս շարժական էր տախտակին հետ միայն, և երբ տախտակը վար իջեցուցի յիշեալ փայտի մէկ ծայրը ինքնին տեղաւորուեցաւ տախտակամածիս վրայ և դառցաւ ոտք մը այդ տախտակին՝ որով կազմուեցաւ փոքրիկ նստարան մը որը միայն մէկ մարդ կրնար հիւրասիրել իր վրայ: Կը նստիմ մի վարկեան նստարանին վրայ, յետոյ կ'սկսիմ երկրորդ ու աւելի բարձր կեցող տախտակով հետաքրքրուիլ, նա ալ վար կիջեցնեմ ու կը լինի փոքրիկ սեղան մը իմ առջեւ դրուած, այդ նստարանին մօտիկը, քիչ մը աւելի բարձր:

Սեղանիկիս վրայ՝ իմ ծալապատիկ թւերուն

մէջ ցաւատենչ գլուխս դնելով, կը նստիմ
նստարանին ու կսկսիմ մտածել
երկար, շատ երկար, կարենալ ինքնամփոփ
ման մը գալու թէ՛ ի՞նչ էր որ պատահեցաւ
այսօր ինձ: Բայց ափսոս որ չէի կրնար յի-
շել դեռ ու կը տառապէի գիտնալու համար
թէ՛ ես ինչո՞ւ այդ չորս պատերու խաւարին
մէջ եմ... վարկեան մը կը բարձրացնեմ գլուխս
կարծես խոր քունէ մը զարթնած ըլլալու կերպարան-
քով ու կը տեսնեմ թէ իմ սենեակէն դուրս լամ-
բար մը վառուած էր, որուն ճառագայթները
իմ սենեակի փոքրիկ պատուհանէն ներս թափանձե-
լով հանդիպակաց պատին վրայ աղոտ լոյսի
քառակուսի մը կը շինէին, և այդ իսկ քառա-
կուսիին մէջ մի դարակ կը նշմարեմ պատին վրայ
առկախ ամրացուած: Կը հետաքրքրուիմ ըսպէ
մը և կը մօտենամ յիշեալ դարակին՝ բանալով
անոր դռնակը: Կը տեսնեմ այնտեղ կարգ մը
առարկաներ, որոնք մէկ-մէկ դուրս հանելով

unpleasant, and the danger of the disease is
often to be feared. The disease is usually
of the nature of a fever, and is attended
with various symptoms, such as
headache, vomiting, and diarrhoea.
The disease is usually fatal, and is
often attended with a fatal
issue. The disease is usually
fatal, and is often attended
with a fatal issue. The disease
is usually fatal, and is often
attended with a fatal issue.

դարակէն, աղոտ լոյսի ներքև կուզեմ գիտնալ թէ
ինչէ՞ր են և ինչո՞ւ կրնան ծառայել: Ճաշարանի
մը մէկ պահարանին առջեւ է որ կը գտնեմ ինքզինքս.
առաջին առարկան դուրս կը հանեմ՝ փայտէ շին-
ուած աղաման մը որուն մէկ կողքն ալ յատ-
կացուած է պղպեղի, ամբողջովթեամբ լեցուած
աղով և պղպեղով: Երկրորդ մէկ աման դուրս
կը հանեմ՝ թէյի կամ սուրճի բաժակ մը, շատ
մեծ, (3/4 լիթր ջուր պարունակող) հողէ պատրաստ-
ուած թաս մը, և այսպէս կը հետաքրր-
քըրուիմ բոլոր իրերով զանոնք մի առ մի
քննութեան ենթարկելով: Բոլոր սպասները
կը տեսնեմ այստեղ ինչ որ մէկ մարդու համար
բաւական պիտի ըլլային՝ լուացուելու, սան-
տըրուելու և ծաշելու համար, ի հարկէ
այդ ամէնը պէտք էր կատարուէր նահապետական
ձևով և ոչ թէ այնպէս ինչպէս այդ
սենեակէն դուրս կը լինէր օր մը առաջ...:

Փամանակը բաւական առաջացաց պէտք էր

լինէր, քանի որ կ'զգայի թէ երկար ատեն
զբաղուած եմ եղեր այդ խաւարին մէջ նըշ-
մարածս դարակով: Վերքերու ցաւերը
տակաւ անզգալի կը դառնային. յանկարծ
ստամոքսիս բողոքի ձայնը կը հասնի, կըզ-
գամ թէ անօթի եմ. ուտելիքները՝ որոնք ան-
կողնոյն մէկ կողմը ձգուած էին, ձեռքերու
փնտռտուքով և մուծին մէջ խարխափելով
վերջապէս կը գտնեմ ու սեղանիս վրայ
կը բերեմ զանոնք: Հակառակ այնքան
սոված ըլլալուս, շատ փոքր կտոր
մը հացով և մէկ հավկիթով կը գոհանայ
իմ ստամոքսը: Ուտելիքը առատ էր
սակայն ծխելիքի մտմտուքը կը տանջէր զիս
քանի որ բոլորը միայն երկու գլանիկ ու-
նիմ և ոչ աւելի: Ընթրիքէն վերջ կը
վառեմ գլա



www.arfd.am/lib

Ելեկտրոնային այս հրապարակման գրաշարութիւնը, էջադրումն ու ձեւավորումը կատարեց ՍԵՒԱԿ ԱՐՈՅԵԱՆ:



1921 Քառս 15-ը Պոլսոյ Թա

Երբանից Երևան օրը եր...

Զարեհոյից իմաստ և քաղաքացիական ազգային
և բանասիր: Կը պիտի մտնի առաջին Գրական
նիստը քաղաքացիական քաղաքացիական իրավունք
նիստը նրա ստեղծողները և նրանց անունը
և իրենց անունը: Նախապես և երբան:

